

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՅՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Արա Ազարյան

Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցը մշտապես եղել է հայ պատմագրության ուշադրության կենտրոնում, որի ուսումնասիրման շուրջ ձևավորվել է հարուստ պատմագիտական գրականություն: Ընդհանրապես խորհրդահայ պատմագրության մեջ Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցը ամենաշատ ուսումնասիրված և լուսաբանված թեմաներից մեկն է հանդիսացել, բայց անժխտելի է այն հանգամանքը, որ վերոնշյալ պրոբլեմը բազմակողմանի քննության է ենթարկվել նաև սփյուռքահայ հեղինակների կողմից: Այդ հեղինակների շարքում Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ իր մեկնաբանություններով ու գնահատականներով առանձնանում է Ս. Վրացյանը: Լինելով դեպքերի անմիջական ժամանակակիցն ու մասնակիցը՝ նա իր աշխատություններում հանգամանորեն ներկայացրել է Հայաստանի խորհրդայնացման պատմությունը: Հեղինակն անդրադառնալով 1920 թ. աշնանը բռնկված, իր բնորոշմամբ, մուրճի և սալի միջև պատերազմին, նշում է, որ պարտված Հայաստանը հայտնվել էր երկու կրակի միջև, քանի որ մի կողմից քեմալականներն էին սպառնում, իսկ մյուս կողմից՝ բուլշևիկները, ուստի նման պայմաններում Հայաստանի խորհրդայնացումը դառնում էր անխուսափելի¹:

Պատերազմի ավարտից հետո Հայաստանի Հանրապետության ներքաղաքական կյանքում տեղի ունեցան որոշ փոփոխություններ: Նոյեմբերի 20-ին Խորհրդարանի Դաշնակցության ֆրակցիայի նիստում վարչապետ Հ. Օհանջանյանը հայտնեց հրաժարական տալու իր որոշումը և ֆրակցիային խնդրեց մտածել նոր վարչապետի թեկնածու առաջադրելու մասին: Այս հարցի վերաբերյալ Ս. Վրացյանը իր հուշերում գրում է, որ Հ. Օհանջանյանի կառավարությանը հաջորդելիք նոր կառավարության բնույթի մասին թե՛ հասարակության մեջ և թե՛ ՀՅԴ-ի շարքերում գոյու-

¹ **Վրացյան Ս.**, Հայաստանը բուլշևիկեան մուրճի և թուրքական սալի միջև, Պեյրուֆ, 1953, էջ 126-127:

թյուն ուներ երկու տեսակետ: «Ոմանք անհրաժեշտ էին գտնում բոլոր կուսակցությունների համախմբումը մի այնպիսի մարդու նախագահությամբ, որն ընդունակ կլիներ միացնել իր անձի շուրջ բոլոր հոսանքները և կարողանար վստահություն ներշնչել թուրքերին: Ոմանք էլ օգտակար էին համարում «ձախակողմեան» կառավարության կազմությունը, որպեսզի հնարավոր լինի ընդհանուր լեզու գտնել բոլշևիկների հետ»¹:

Ս. Վրացյանի պնդմամբ Խորհրդարանի մեծամասնությունը կողմնակից էր առաջին տեսակետին: Ուստի, դաշնակցական ֆրակցիան և Խորհրդարանի նախագահությունը հանձնարարեց Հ. Քաջազնունուն կազմել «չափաւոր հոսանքներից կոալիցիոն կառավարութիւն»²: Խնդիրը կայանում է նրանում, որ վերջինս նոր էր վերադարձել Ամերիկայից և կոալիցիա կազմելու տեսակետից հարմար թեկնածու էր համարվում, թեև, ըստ Ս. Վրացյանի, նա մեծ դժվարությամբ է համաձայնվում ստանձնել այդ պարտականությունը: «Պարոններ,- ասում էր Քաջազնունին,- ես գիտակցում եմ, թե ինչ է պահանջվում ինձանից: Դուք զոհ եք փնտրում ալեկոծության մատնված նավը փրկելու համար, և ուզում եք, որ ես լինեմ այդ զոհը: Եթե այդ է Հայրենիքի փրկության միջոցը և հայ ժողովրդի կամքը, ես խոնարհվում եմ նրա առջև»³: Ս. Վրացյանը նշում է, որ Հ. Քաջազնունին ցանկանում էր կազմել բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներից բաղկացած կոալիցիոն կառավարություն, սակայն ընդդիմադիր կուսակցությունները չցանկացան կառավարության մաս կազմել, որով, փաստորեն, կոալիցիոն կառավարություն կազմելու Քաջազնունու ջանքերը ձախողվեցին: Նման պայմաններում նա ներկայացրեց իր հրաժարականը Խորհրդարանի նախագահությանն ու դաշնակցության ֆրակցիային՝ նշելով, որ հարկավոր է «ձախ» տարրերից կազմել կառավարություն⁴՝ վարչապետության թեկնածու առաջարկելով գյուղատնտեսության և պետական գույքի նախարար Ս. Վրացյանին⁵: Վեր-

¹ Վրացեան Ս., Կեանքի ուղիներով. դեպքեր, դեմքեր, ապրումներ, հ. Ե, Պէյրուֆ, 1966, էջ 180:

² Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, «Հայրենիք», ամսագիր, 1922, №2, էջ 50:

³ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 517-518:

⁴ Տե՛ս Վրացեան Ս., Կյանքի ուղիներով, հ. Ե, էջ 181:

⁵ Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 518:

ջինս Խորհրդային Ռուսաստանի հետ համաձայնության հասնելու ամենահարմար թեկնածուն էր նկատվում, որն էլ կազմեց «սուր կերպով ձախ հակող դահլիճ մը»¹: Նման պայմաններում նոր կառավարություն կազմող անձնավորությունը պետք է լիներ և՛ ընդգծված ռուսասեր և՛ սոցիալիստ, իսկ Քաջազնունին այդ մարդը չէր²:

Նոյեմբերի 23-ի Խորհրդարանի արտահերթ նիստում Խորհրդարանի նախագահ Հ. Քաջազնունին ընթերցեց վարչապետ Հ. Օհանջանյանի և նրա կառավարության ներկայացրած հրաժարականը³: Խորհրդարանի այս նիստում երկրում տիրող իրավիճակի մասին զեկուցմամբ հանդես եկավ վարչապետ Հ. Օհանջանյանը, որից հետո ելույթ ունեցան նաև Խորհրդարանի պատգամավորներ Ս. Թորոսյանը և Ա. Խոնդկարյանը: Ս. Թորոսյանը ՀՅԴ ֆրակցիայի անունից կառավարության հրաժարականը համարում էր հարգելի և ընդունում այն, իսկ Ա. Խոնդկարյանը, լինելով սոցիալիստ-հեղափոխական պատգամավոր, իր խմբակցության անունից նշում էր, որ իրենք նույնպես ընդունում են կառավարության հրաժարականը և համոզմունք հայտնում, որ «մեր քաղաքական կյանքը կկարողանա կարող ուժեր հրապարակ հանել մեր երկրի կառավարության համար»⁴: Այնուհետև Խորհրդարանն ընդունում է Հ. Օհանջանյանի կառավարության հրաժարականը և անցնում նոր վարչապետի ընտրությանը: Նոյեմբերի 23-ի նույն նիստում Խորհրդարանը 34 ձայնով Ս. Վրացյանին ընտրում է նորընտիր վարչապետ և հանձնարարում կազմել կառավարություն⁵: Վարչապետ ընտրվելուց հետո նա հանդես է գալիս հայտարարությամբ և խնդրում 24 ժամ ժամանակ կառավարության կազմը ներկայացնելու համար: Հաջորդ օրը երեկոյան տեղի ունեցած Խորհրդարանի նիստում հաստատվում է Վրացյանի ներկայացրած կառավարության կազմը, որի մաս էին կազմում նաև սոցիալիստ հեղափոխականները⁶: Ահա կառավարություն կազմելուց անմիջապես հետո Ս.

¹ **Հովհաննիսյան Ռ.**, Հայ Յեղափոխական Դաշնակցության դերը Հայաստանի Հանրապետության մէջ, «Ասպարեզ», օրաթերթ, մայիս 28/29, Գլենդել, 1992, էջ 10:

² **Իրազեկ Յ.**, Մօտիկ անցեալից. պատմական դէպքեր և ապրումներ 1917-1922, Պէյրուֆ, 1956, էջ 85:

³ ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 75, թ. 1-2, «Յառաջ», 1920թ., 25 նոյեմբերի:

⁴ «Յառաջ», 1920թ., 25 նոյեմբերի:

⁵ ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 75, թ. 3-4:

⁶ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 119, թ. 75:

Վրացյանը սկսում է բանակցությունները Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Լեգրանի հետ: Այդ բանակցությունների մասին հեղինակը գրում է հետևյալը. «Ստանձնելով արտաքին գործոց նախարարությունը՝ ես այցելութիւն տուի օտար պետութեանց ներկայացուցիչներին: Սով. Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լեգրանի հետ ունեցած կարճ զրոյցից պարզուեց, որ նա միայն մի մտահոգութիւն ունի՝ երբ պիտի Հայաստանի կառավարութիւնը համաձայնի կարմիր զօրամասեր մտցնել Հայաստան: Ես պարզաբանեցի, որ նոր կառավարութիւնն էլ, նախորդի պէս, ամուր կանգնած է անկախութեան տեսակէտի վրայ, **բայց իր քաղաքական ու ընկերային համակրանքներով հակուած է դէպի Սով. Ռուսաստանը** (ընդգծումը մերն է – Ա. Ա.):

Լեգրանին, ըստ երեւոյթին, այդքանը չէր գոհացնում. նա՝ հեզնական ժպիտը շրթունքներին եւ ձեռքերը շփելով՝ հասկացնում էր, որ դրական օգնութիւն ստանալու համար անհրաժեշտ է դրական գործ կատարել, այսինքն՝ մեր սեփական ձեռքերով Հայաստանը դարձնել Խորհրդային...»¹: Այս ընդարձակ մեջբերումից երևում է, որ Վրացյանը տակավին հույսեր է ունեցել, թե առանց երկիրը Խորհրդայնացնելու, միայն ռուսական կողմնորոշում ընդունելով, կարող է պահել Հայաստանի Հանրապետության անկախությունը: Այն, որ Վրացյանի կառավարությունը ակնկալում էր բանակցությունների միջոցով փրկել Հայաստանի Հանրապետության անկախությունը, հաստատում է նաև Հ. Տերտերյանը. «Վրացեանի կառավարութիւնը դեռ աղօտ յոյս ունէր, որ քեմալական Թուրքիայի հետ հնարաւոր էր հաշտութիւն կնքել եւ այդպիսով Հայաստանը փրկել Խորհրդայնացումից»²: «Կառավարության նպատակն էր սերտ բարեկամություն հաստատել Խորհրդային Ռուսաստանի հետ և ապահովել նրա աջակցությունը: Ամենքի համար պարզ էր այն օրերին, որ Հայաստանը կամ Ռուսաստանի հետ պետք է լիներ, կամ պետք է դառնար թուրքերի ձեռքին խաղալիք, եթե չբնաջնջվեր իսպառ»³, - գրում է Ս. Վրացյանը:

Ինչ վերաբերում է Բ. Լեգրանի հետ ունեցած իր հաջորդ տեսակցու-

¹ Վրացեան Ա., Կեանքի ուղիներով, հ. Ե, էջ 185:

² Տերտերյան Հ., Հայաստանի Հանրապետութեան և Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները. Լ. Շանթի պատուիրակութիւնը, «Հայրենիք», ամսագիր, 1954, թ. 5, մայիս, էջ 10:

³ Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, էջ 529:

թյանը, ապա հեղինակը գրում է հետևյալը. «Իմ երկրորդ տեսակցությունը Լեգրանի հետ վերաբերում էր այն հարցերին, որոնց մասին նա արդեն բանակցություններ վարել էր նախորդ արտաքին գործոց նախարարի հետ՝ Հայաստանի և Սով. Ռուսաստանի փոխյարաբերություն, ռուսական օգնություն հայ-թուրքական վեճի մէջ, ռուս-հայկական համաձայնություն եւ այլն:

Լեգրանի բոլոր մտքերը պատում էին մի կէտի շուրջ, հիմա այլևս ուշ է այդ նիւթերի մասին խօսելը: Նա առաջարկում է անմիջապէս յետ կանչել մեր պատուիրակությունը Ալեքսանդրապոլից, խզել ամէն յարաբերություն թուրքերի հետ եւ ռուսական զօրք մտցնել Հայաստան: Նա մեղադրում էր Հ. Օհանջանեանին եւ Ռ. Տէր Մինասեանին, որոնք ժամանակին չէին ընդունել իր պայմանները եւ դրանով, իբր թէ, պատճառ էին դարձել, որ թուրքերը գրավեն Կարսն ու Ալեքսանդրապոլը»¹: Լեգրանի այս առաջարկությունը Վրացյանը համարում է անընդունելի, քանզի, հեղինակի կարծիքով, դա կնշանակեր «Հայաստանի անկախութեան ջրնջում»²: Նա մտահոգություն է հայտնում, թէ ինչ երաշխիք է տալիս Լեգրանը, որ մինչև խորհրդային զորքերի տեղ հասնելը թուրքերը չեն շարժվի Երևան և Դարալագյազ ու նոր կոտորածներ չեն իրականացնի, նման պարագայում էլ ում էր պետք բուլշևիկների օգնությունը: Լեգրանը հավաստիացնում էր, թէ թուրքերը այդպիսի քայլ չեն անի՝ չեն կովի ռուս զորքի դեմ: Անշուշտ, պետք է համաձայնել Վրացյանի այն տեսակետի հետ, որ Լեգրանին մտահոգողը այլևս հայ ժողովրդի ճակատագիրը չէր, այլ՝ Հայաստանի հնարավորինս շուտ խորհրդայնացումը: Մինչդեռ Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ Վրացյանը առաջ էր բերում հետևյալ առարկությունները: Նա պնդում էր, որ խորհրդայնացման դեպքում Հայաստանը պիտի կտրվեր Եվրոպայից, Ամերիկայից և այնտեղից ստացվող պարենից ու բացի այդ խորհրդայնացումը մահացու հարված պիտի հասցներ Հայկական հարցին, իսկ Լեգրանը պահանջում էր Ալեքսանդրապոլի բանակցությունները խզել և ընդունել Խորհրդային Ռուսաստանի միջնորդությունը, բայց Վրացյանը հավատացած էր, որ այդ պարագայում կվերսկսվեր թուրքական առաջխաղացումը և մինչև Կարմիր բանակի Հայաստան մտնելը թուրքական զորքերը կգրավեին նաև Երևանը: Լեգրանի այն պատասխանին, որ եթե թուրքերը իմանան ռու-

¹ Վրացեան Ա., Կյանքի ուղիներով, հ. Ե, էջ 186-187:

² Նույն տեղում, էջ 187:

սական զորքերի Հայաստան մտնելու մասին չեն համարձակվի դիմել նման քայլի, Վրացյանը նկատում է՝ եթե դա այդպես է, ուրեմն խորհրդային կողմի դիվանագիտական միջամտությունը կարող է բավական լինել թուրքական հարձակումը կասեցնելու համար¹:

Այսպիսով, Ս. Վրացյանը, ներկայացնելով իր և Լեգրանի միջև ընթացած բանակցությունները, հանգում է հետևյալ եզրակացության. «Բանակցությունները դրական արդյունք չտվին. կառավարությունը վախենում էր, որ եթե կարմիր բանակը Հայաստան մտներ հյուսիսից, թուրքերը առաջ կշարժվեին հարավից և ռուսների հասնելուց շատ առաջ կգրավեին Երևանը»²: Կարծում ենք Վրացյանի և Լեգրանի միջև ընթացող այս բանակցությունների ապարդյուն լինելը կանխատեսելի էր, որովհետև Հայաստանի խորհրդայնացման խնդիրը հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին արդեն իսկ վճռվել էր Մոսկվայում և Բաքվում³:

Փաստորեն, Հայաստանի համար ստեղծված այդ օրհասական պահին նրա ճակատագիրը վճռեցին Քեմալական Թուրքիան և Խորհրդային Ռուսաստանը: Հայաստանը պարտվել էր պատերազմում և միանգամայն բնական էր, որ Թուրքիան պիտի թելադրեր իր պայմանները, իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա վերջինս օգտագործեց այդ հարմար առիթը և խաղաղ կերպով խորհրդայնացրեց Հայաստանը: Անշուշտ, Ռուսաստանի նպատակը հենց դա էր, նա իրադարձություններից առաջ չընկավ և սպասեց այնքան, որ թուրքերի սպառնալիքների ներքո Հայաստանն, այլընտրանք չունենալով, ընդունեց խորհրդայնացումը: Նման պայմաններում, թեև նոյեմբերի 29-ին Կարմիր բանակի զորամասերը Հայիեղկոմի գլխավորությամբ առանց որևէ կրակոցի, առանց ընդհարման մտան Իջևան, բայց նույն օրը Իջևանում ձերբակալվեցին զորամասի բոլոր սպաները, քաղաքացիական վարչության անդամները և կապիտան Խաչատրյանը⁴: Այս առիթով Ս. Վրացյանն իր աշխատության մեջ նշում է, որ ինքը բողոքել է Բ. Լեգրանին և պահանջել դուրս հանել ռուսական զորքերը Հայաստանի տարածքից⁵, որին ի պատասխան Լեգրա-

¹ Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 529-530:

² Նույն տեղում, էջ 531:

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., քաղաքական պատմություն, (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 2000, էջ 303, 323, 328-330:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 529, թ. 168:

⁵ Տե՛ս **Վրացյան Ս.**, Կեանքի ուղիներով, հ. Ե, էջ 191:

նը սկզբում զարմացել, ապա պնդել է, թե այդպիսի բան չի կարող լինել, ուստի խնդրել է իրավունք տալ իրեն խոսելու ուղիղ հեռագրաթելով և պարզելու դրությունը, քանզի այդ ամենը Լեգրանը թյուրիմածություն էր համարում: Կարելի է ենթադրել, որ Լեգրանը տեղյակ չի եղել նոյեմբերի 29-ին կատարված այս իրադարձության մասին, դրա համար էլ այն համարել է թյուրիմածություն, բայց շուտով Լեգրանը Գ. Օրջոնիկիձեից տեղեկանում է, որ ամենևին էլ թյուրիմածություն չէ Կարմիր բանակի զորամասերի մուտքն Իջևան: Օրջոնիկիձեն հայտնում է, որ Հայաստանը խորհրդայնացնելու վերաբերյալ կա որոշում, ուստի նա հանձնարարական է տալիս Լեգրանին, որպեսզի վերջինս Վրացյանից պահանջի պատասխան՝ իշխանությունը հանձնելու վերաբերյալ¹:

Նոյեմբերի 29-ին Լեգրանը այս ամենի մասին վերջնագրով տեղեկացնում է Հայաստանի կառավարությանը, իսկ հաջորդ օրը Հայաստանի խորհրդայնացման գրավոր պահանջ ներկայացնում: Լեգրանը միաժամանակ հայտնում է Վրացյանին, որպեսզի վերջինս առաջարկի խորհրդային դիրքորոշում ունեցող դաշնակցականներին միանան իրենց և միասին արարեն Հայաստանի իշխանությունը, իսկ Դրոյին առաջարկի մտնել Հայկեղկոմի կազմի մեջ²: Այս առիթով Վրացյանը գրում է հետևյալը. «Նոյեմբերի 30-ին Լեգրանից ստացայ պաշտօնական մի գրութիւն, որով նա ցաւ էր յայտնում Իջևանի շրջանում պատահած «թիրիմածութեան» համար եւ հաղորդում էր, թէ կարգադրուած է պարպել գրաւուած վայրերը եւ ազատ արձակել բանտարկեալներին: Սակայն, կէս ժամ չանցած, բոլշեիկեան միսիայից հեռախօսով խնդրեցին ինձանից ժամադրութիւն նշանակել Լեգրանի համար: Լեգրանը խնդրում էր, որ մեր խօսակցութեան ներկայ լինի եւ Դրօն: Ժամը 12-ին Լեգրանը իր քարտուղարի հետ եկաւ մօտս եւ Դրօի ներկայութեամբ, գրեթէ բառացի, յայտնեց հետեւյալը. Ռուսաստանի Կօմունիստական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէն որոշել է Հայաստանում մտցնել խորհրդային կարգեր: Հայաստանի յեղկօմը արդէն մտել է Հայաստանի սահմանները: Ընկերներ՝ ը, դանդաղելը յղի է ծանր հետեւանքներով: Ես ուզում եմ իմանալ, թէ ի՞նչ է լինելու ձեր դիրքը»³: Փաստորեն, սրանով խորհրդային

¹ Տե՛ս Հայոց պատմություն, հ. 4, գիրք առաջին, ՀՀ ԳԱԱ ՊԻ, Երևան, 2010, էջ 272:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 529, թ. 171:

³ **Վրացեան Ա.**, Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», ամսագիր, 1923, №1, էջ 69:

Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանը բարձրաձայնում էր Խորհրդային կառավարության որոշման մասին, ըստ որի, փրկության միակ տարբերակը երկիրը Խորհրդայնացնելու մեջ էր:

Ս. Վրացյանը նշում է, որ բոլշևիկները իրենց գործակալների միջոցով գաղտնի քարոզչություն էին մղում: «Նրանք (բոլշևիկները – Ա. Ա.) խոստանում էին հայերին ազատել տաճիկներից, յետ ստանալ Կարսն ու Սուրմալուն, բերել առատ հաց, ոսկի, մանուֆակտուրա, նալթա և այլ տեսակ բարիքներ: Այս ամենը շատ էր գրաւիչ յոզնած ու տնաքանդ ժողովրդի համար»¹, - գրում է Ս. Վրացյանը: Հեղինակը հենց այս հոգեբանական վիճակով է բացատրում այն հանգամանքը, որ Կարմիր բանակի զորամասերը համարյա առանց դիմադրության մուտք գործեցին Հայաստան: Բացի այս, նա նշում է, որ ինչքան տաճիկները անզիջող էին դառնում, այնքան ժողովրդի և զորքի մոտ ուժեղանում էր բոլշևիկների նկատմամբ սերն ու համակրանքը: Սրան զուգահեռ, հեղինակը նշում է, որ եթե կառավարությունը փորձեր զենքով բոլշևիկներին դիմադրել, ապա չէր բացառվում, որ հայկական զորքի ու ժողովրդի մի մասը կովեր Կարմիր բանակի դեմ, ինչպես, որ դա տեղի էր ունեցել Չամբարակի շրջանում: Սրանով Վրացյանը ցանկանում էր ընդգծել այն կարծիքի չափազանցված լինելը, թե հայ զինվորը չի կռվի ռուսի դեմ: «Կային զորամասեր, որոնք պահել էին իրենց ներքին կարգապահութիւնը եւ ռազմական ոգին եւ անպայման կը դիմադրէին բոլշևիկներին, եթէ այդ իմաստով հրաման տրուէր: Զինուորական մասերից զատ երկրի մէջ, առհասարակ, քիչ չէին այնպիսի ուժեր, որոնց կարելի էր հանել արշաւող բոլշևիկների դէմ: Սակայն այդ դէպքում քաղաքացիական կռիւը կը դառնար անխուսափելի, մինչդեռ մեր գլխաւոր նպատակը երկրին խաղաղութիւն տալն էր: Ինչ եւ լինէր քաղաքացիական կռուի ելքը, ժողովուրդը մեծապէս պիտի տուժէր»²: Կարծում ենք՝ Վրացյանի վերոնշյալ միտքը իսկապես չափազանցված է, նա փորձում է ընդգծել իր կարբինետի՝ խաղաղության կողմնակից լինելու հանգամանքը, բայց չենք կարծում, որ թուրք-հայկական պատերազմում ջախջախիչ պարտություն կրած ու բարոյալքված հայոց բանակը կկարողանար դիմադրել Կարմիր Բանակի զորամասերին, ինչքան էլ որ լինէր կառավարության կողմից դա իրական-

¹ Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, էջ 69:

² Նոյն տեղում, էջ 70:

նացնելու համար տրված հրաման:

Այնուհետև Վրացյանն անդրադառնում է նոյեմբերի 30-ի լույս դեկտեմբերի 1-ի գիշերը, ԱԳՆ առանձնասենյակում տեղի ունեցած ՀՅԴ Բյուրոյի, Հայաստանի Կենտրոնական կոմիտեի, խորհրդարանական հատվածի ու կառավարության անդամների և մի շարք այլ պատասխանատուների համագումար նիստին, որտեղ քննարկվում է Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ Լեգրանի ներկայացրած վերջնագիրը: Հեղինակը նշում է, որ նիստի սկզբում ընդհանուր տրամադրությունն անհաշտ էր: Մեկը մյուսի հետևից ելույթ են ունենում Հ. Օհանջանյանը, Ս. Արարատյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Զիլինգարյանը, Վ. Նավասարդյանը, ովքեր չէին ընդունում Լեգրանի պահանջը և առաջարկում էին երկիրը բոլշևիկյան նվաճումներից պաշտպանելու համար անմիջապես դիմել զենքի: Հարկ է նշել, որ այս հարցի քննարկման շուրջ եղան նույնիսկ ծայրահեղ մոտեցումներ: Օրինակ՝ ելույթ ունեցողներից Արշակ Հովհաննիսյանն առաջարկում էր ձերբակալել Լեգրանին, հայտարարել զորահավաք և դիմադրել բոլշևիկներին¹:

Հեղինակը նշում է, որ նիստի մասնակիցներից Դրոն, Հ. Քաջազնունին, Ռ. Տեր-Մինասյանը պնդում էին հակառակը և բոլշևիկների դեմ կռիվը համարում աղետաբեր՝ կարծելով, որ կռվի դեպքում երկու ճակատ կստեղծվի, իսկ Հայաստանը չէր կարող միաժամանակ կռվել բոլշևիկների ու քեմալականների դեմ: Նրանք իրենց «պարտականությունն էին համարում ժողովուրդը փրկել փոթորիկներից եւ ոչ թէ նրան նոր փոթորիկների մէջ նետել»²:

Վրացյանը նշում է, որ վերջիններս գտնում էին, որ հայկական զորքը ի վիճակի չէ որևէ պատերազմ վարելու, հատկապես կռվելու ռուս զինվորի դեմ, հետևաբար, կռվի ամեն մի կոչ համարում էին աններելի մի արկածախնդրություն³:

Նման պայմաններում, ինչպես իրավացիորեն նշում է Հ. Քաջազնունին, Հայաստանին մնում էր մի ելք՝ ընդունել Լեգրանի վերջնագիրը և խաղաղ կերպով իշխանությունը փոխանցել բոլշևիկներին: Ստեղծված ի-

¹ Թորոսեան Ա., Հանդիպումներ վարչապետ Յ. Քաջազնունիի հետ, «Հայրենիք», 1952, № 7, հուլիս, էջ 7:

² Վրացեան Ա., Յուշեր մօտիկ անցեալից, էջ 71:

³ Նույն տեղում:

րավիճակում Հ. Քաջազնունին տրամաբանական է համարում այն, որ «հայ բոլշեիկները, հենուած ռուսական ոյժի վրայ, պիտի վարեն փաստօրէն ազգային քաղաքականութիւն»¹: Յավոք սրտի, բոլշեիկների՝ իշխանութեան անցնելուց հետո վարած քաղաքականութիւնն ամենևին էլ ազգային շահերից չբխեց:

Այնուհետև Վրացյանը գրում է, որ այդ վիճաբանութիւնները շարունակվում են մինչև կես գիշեր, երբ իրեն Ալեքսանդրապոլից ուղիղ հեռագրաթելի մոտ է կանչում հայկական պատվիրակութեան նախագահ Ալ. Խատիսյանը և հայտնում, որ քեմալականները ներկայացրել են հաշտութեան պայմաններ և վերջնագիր՝ այն ընդունելու կամ մերժելու համար տալով 48 ժամ ժամանակ²: Անշուշտ, թուրքական այս վերջնագիրը հստակեցրեց նիստի մասնակիցների դիրքորոշումը և նրանց մեծ մասը եկավ այն համոզման, որ պետք է ընդունել Լեզրանի, ինչպես նաև Կարաբեքիրի վերջնագիրը:

Թե ինչու որոշվեց ընդունել նաև Կարաբեքիրի վերջնագիրը, Վրացյանը բացատրում է հետևյալ կերպ: Նրա համոզմամբ այդ որոշումը կայացվեց երկիրը քեմալականների նոր արշավանքից զերծ պահելու համար, որովհետև եթե նրանց պայմանները մերժվեր, ապա մինչև բոլշեիկների ժամանելը Երևանը կգրավվեր թուրքերի կողմից: «Մենք շատ լաւ գիտակցում էինք, որ ընդունել Քեազիմ Կարաբեքիրի վերջնագիրը, կը նշանակէր, ապագային, անհուն նուաստացումների ենթարկել մեր կուսակցութիւնը եւ սուր զէնք տալ մեր հակառակորդների ձեռքը»³: Հենց այս ժողովի ժամանկ էլ որոշվեց Դրոյին ու Հ. Տերտերյանին հանձնարարել կառավարութեան և կուսակցութեան անունից բանակցել Լեզրանի հետ:

Դեկտեմբերի 1-ին Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեզրանը վարչապետ Ս. Վրացյանին է հանձնում հետևյալ գրութիւնը. «Վկայակոչելով երեկ Հայաստանի ռազմական նախարար Դրոյի ներկայութեամբ մեր խոսակցութիւնը, նկատի ունենալով ՌԿԿ ԿԿ ընդունած որոշումը՝ Խորհրդային Սոցիալիստական անկախ Հայաստանի Ռազմահեղափոխական ժամանակավոր կոմիտե ստեղծելու մասին, հաստատում եմ անհրաժեշտաբար պարզելու Հայաստանում խորհրդ-

¹ Թորոսեան Ա., Հանդիպումներ վարչապետ Յ. Քաջազնունիի հետ, էջ 7:

² Վրացեան Ա., Կեանքի ուղիներով, էջ 195:

³ Վրացեան Ա., Յուշեր մօտիկ անցեալից, էջ 72:

դային իշխանություն ստեղծելու հարցի վերաբերյալ Հայաստանի ներկա կառավարության վերաբերմունքը: Իմ ստացած տեղեկությունների համաձայն Հայիեդկոմը մտել է Հայաստանի սահմանները»¹: Նույն օրը երեկոյան, խորհրդարանի շենքում տեղի է ունենում Դաշնակցության ֆրակցիայի վերջին նիստը, որտեղ դրված էր մի հարց, թե ինչպես պետք է դուրս գալ ստեղծված իրավիճակից: Ս. Վրացյանը նշում է, որ նախորդ օրվա վիճաբանությունները, գրեթե նույնությամբ, շարունակվում են այնքան ժամանակ, մինչև որ հարցը դրվում է քվեարկության և 22 ձայնով ընդդեմ 7-ի որոշվում է առանց դիմադրության իշխանությունը հանձնել բոլշևիկներին և երկիրը խորհրդայնացնել²:

Փաստորեն, դեկտեմբերի 1-ի այս նիստի ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է իշխանությունը խաղաղ կերպով փոխանցել բոլշևիկներին: Հաջորդ օրը Ս. Վրացյանի կաբինետը հրաժարվում է իշխանությունից և այն հանձնում Դրոյին, վերջինս պետք է կառավարեր երկիրը մինչև Հայիեդկոմի Երևան հասնելը³: Այդ մասին Ս. Վրացյանը հեռագրում է Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին⁴: Դեկտեմբերի 2-ին ժամը 12-ին Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներ Դրոյի, Հ. Տերտերյանի և ՌԻՏՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Լեգրանի միջև Երևանում կնքվում է հայ-ռուսական համաձայնագիր, որով, փաստորեն, դաշնակցական կառավարությունը ստիպված, բայց կամովին իշխանությունը հանձնում է բոլշևիկներին, այլ կերպ ասած, Հայաստանը խորհրդայնացվում է:

Ինչ վերաբերում է Հայաստանի խորհրդայնացման օրվա հարցին, ապա հեղինակը, հակադրվելով խորհրդահայ պատմագրության պաշտպանած այն տեսակետին, թե Հայաստանը խորհրդայնացել է նոյեմբերի 29-ին, իրավացիորեն նշում է, որ այդ օրը հայ բոլշևիկների մի փոքր խումբ մտել է Ադրբեջանին սահմանակից Իջևան գյուղը և Բաքվից բերված թռուցիկներ ցրել, որոնք հայտարարում էին, թե Հայաստանում «դաշնակների» կառավարությունը տապալված է, մինչդեռ այդ նույն ժա-

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 352:

² Վրացյան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, էջ 72:

³ Իրազեկ Յ., նշվ. աշխ., էջ 87:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 560, թ. 476:

մանակ Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչը Երևանում խաղաղ բանակցություններ էր վարում դաշնակցական կառավարության հետ: Այդ բանակցություններից միայն երեք օր անց Հայաստանը հայտարարվեց խորհրդային: «Հայաստանի խորհրդայնացումը տեղի ունեցավ 1920 թ. Դեկտ. 2-ին, խաղաղ կերպով, Մոսկվայի ներկայացուցիչ Լրգրանի եւ Հայաստանի կառավարութեան միջեւ ստորագրուած համաձայնութեան հետեանքով, բայց իրենք՝ բոլշեւիկները պնդում են, որ խորհրդայնացումը արդիւնք էր յեղափոխութեան եւ խորհրդայնացման օր են հաշուում 1920 թ. Նոյ. 29-ը, երբ, իբր թէ, հայ բանւորութիւնն ու գիւղացիութիւնը ապստամբելով՝ տապալեցին Հայաստանի ազգային կառավարութիւնը եւ տեղը հաստատեցին խորհրդային իշխանութիւն»¹, գրում է Ս. Վրացյանը: Հեղինակը գտնում է, որ Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ պետք է երկու պատճառ փնտրել՝ ներքին և արտաքին: Նրա կարծիքով ներքին պատճառները բխում էին Հայաստանի ընդհանուր կացությունից: Թեև նրա համոզմամբ ներքին հակասությունների կամ հայ ժողովրդի հոժար կամքով չէ, որ խորհրդայնացվեց Հայաստանը, այլ՝ արտաքին ուժերի ճնշման տակ: Ներքին դժվարությունները պարզապես առիթ ծառայեցին արտաքին թշնամիների համար: Իսկ արտաքին թշնամի հեղինակը համարում է բոլշեւիկներին և թուրքերին: «Առաջին տեղը պէտք է դասել բոլշեւիկներին,- գրում է Ս. Վրացյանը,- որովհետեւ եթէ Խորհրդային Ռուսաստանը չքաջալերեր ու չօգնէր քեմալական Թուրքիային, նա այն ժամանակայ պայմաններում, համարձակութիւն չէր ունենայ յարձակելու Հայաստանի վրայ»²: Համամիտ ենք հեղինակի այն եզրահանգմանը, որ Հայաստանը խորհրդայնացավ բոլորովին խաղաղ կերպով, առանց որևէ հեղափոխության, առանց մեկի քիթը արյունելու³: Նա նշում է, որ «ո՛չ հայ ժողովրդի հոժար կամքով, այլ արտաքին ուժերի ճնշման տակ, 1920 թ. դեկտ. 2-ին, Հայաստանում տեղի ունեցավ վարչաձևի փոփոխություն. ժողովրդավար իրավակարգի տեղը բիրտ ուժով բռնատիրական իշխանությունը հաստատվեց: Խորհրդարանական կառավարությանը հաջորդեց Հայիեղկոմը, ռուսական սվինների պաշտպանության տակ»⁴: Թվում էր, թե բոլշեւիկների իշխա-

¹ Վրացյան Ս., Ինչո՞ւ և ինչպես խորհրդայնացավ Հայաստանը, Թեհրան, 1982, էջ 3:

² Նույն տեղում, էջ 7:

³ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 535:

⁴ Նույն տեղում, էջ 540:

նության գալով խաղաղություն կհաստատվեր երկրում և ժողովուրդը կապրեր իր բնականոն կյանքով, բայց դա միայն թվում էր: Ս. Վրացյանը նշում է, որ ժողովուրդը իշխանափոխությունից հետո լիահույս էր և սպասելիքներ ուներ նոր իշխանություններից: «Հոռետես, թե լավատես՝ սպասում էին, որ 1. վերջ կգտնե երկրում պատերազմի առաջ բերած քայքայումը, 2. վերջ կգտնե պատերազմը, և՛ թուրքը կհեռանա Հայաստանի սահմաններից, 3. Խորհրդային Ռուսաստանի միջամտությամբ բարեկամական հարաբերություններ կհաստատվին Հայաստանի և Թուրքիայի միջև Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ, այս կամ այն ձևով կլուծվի և թրքահայկական հարցը, 4. կվերականգնվի երկրի ներքին անդորրությունը, և ժողովուրդը նորից հնարավորություն կստանա լծվելու խաղաղ ու շինարար աշխատանքի: Բոլշևիկները իրենց հերթին պաշտոնական թե անպաշտոն շռայլ խոստումներով ուժեղացնում էին այս տրամադրությունները»¹: Ահա հենց այսպիսի հույսերով ներշնչված խորհրդայնացվեց Հայաստանը:

Այսպիսով, Ս. Վրացյանը, ներկայացնելով Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցը, գալիս է այն ընդհանուր եզրահանգման, որ Հայաստանը խորհրդայնացվեց բոլորովին խաղաղ պայմաններում, առանց բախման, առանց որևէ հեղափոխության, բայց ոչ հայ ժողովրդի կամքով և ցանկությամբ, այլ արտաքին ուժերի՝ Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի պարտադրանքի ներքո:

Բանալի բառեր: *Խորհրդայնացում, բանակցություն, Ս. Վրացյան, Բ. Լեգրան, պատմագրություն, Հայաստան, Խորհրդային Ռուսաստան, քեմալական Թուրքիա:*

ПРОБЛЕМА СОВЕТИЗАЦИИ АРМЕНИИ ПО МНЕНИЮ СИМОНА ВРАЦЯНА

Արա Ազաթյան

Ключевые слова: *Советизация, Переговоры, С. Врацян, Б. Легран, историография, Армения, Советская Россия, кемалистская Турция.*

Вопрос советизации Армении является одним из самых важных и спорных вопросов в истории современного армянского народа. Этот вопрос всегда был

¹ Նույն տեղում, էջ 542:

в центре внимания армянской историографии, вокруг изучения которого создавалась богатая историческая литература как в Армении, так и в Диаспоре. Целью данной статьи было представить и проанализировать взгляды и оценки известного писателя из диаспоры Симона Врацяна по вопросу советизации Армении. Как непосредственный современник и участник событий, он подробно представил в своих произведениях историю советизации Армении.

THE ISSUE OF SOVIETIZATION IN ARMENIA ACCORDING TO SIMON VRATSYAN

Ara Azatyan

Key words: *Sovietization, negotiation, S. Vratsyan, B. Legran, historiography, Armenia, Soviet Russia, kemalist Turkey.*

The issue of the sovietization of Armenia is one of the most important and controversial issues in the modern period of the Armenian history. It has always been in the center of attention of the Armenian historiography, the study of which was the basis for the creation of rich historical literature both in Armenia and in the Diaspora. With this article, our goal was to present the views and assessments of the famous Diaspora Armenian author Simon Vratsyan on the issue of Sovietization in Armenia as well as analyze them. Being a direct contemporary and participant of the events, he presented the history of the Sovietization of Armenia in his works in details.

Արա Ազատյան, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու

Ara Azatyan, Ассистент кафедры истории армянского народа и социальных наук Иджеванского филиала ЕГУ, кандидат исторических наук

Ara Azatyan, Assistant at the Chair of Armenian History and Social Sciences of YSU Ijevan Branch, PhD in History